ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՆՍԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/2

ք. Երևան «20» « 01 » 2020թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հանրային և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3) կամ տրամադրում է հաշվի քաղվածքներ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 306 000 (երեք հարյուր վեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության կամ հաշվի քաղվածքների հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և տարածվում է Կողմերի միջև 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը՝ 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **11 /տասնմեկ/** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Յուքոմ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
Հ\Հ 163518012543	Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ,
ՀԿՀՀ 02602449	Հ\Հ 1570043102134100
Գործադիր տնօրեն՝	ՀԿՀՀ 00024873
_____ Ա.Աբրահամյան	Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
(ստորագրություն)	_____ Կ.Ասատուրյան
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
«20» « 01 » 2020թ. կնքված
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	64211100	Հանրային հեռախոսակապի ծառայություններ Ձեռքբերվող Ծառայության նկարագիրը 1. Քաղաքային հեռախոսահամարները բաղկացած պետք է լինեն 8 հիմնական համարներից, որոնցից 2-ից յուրաքանչյուրը պետք է ունենան հիմնական հեռախոսահամարի միջոցով 7 ելքային զանգեր կատարելու հնարավորություն: 2. Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը: 3. Հեռախոսահամարները պետք է գործեն ինչպես առանձնացված, այնպես էլ հնարավորություն ունենան մեկ հիմնական հեռախոսահամարի միջոցով ելքային զանգեր կատարելու: 4. Օպերատորի կողմից բաժանորդի տարածքում պետք է տեղադրվեն, կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները, ինչպես նաև անցկացվեն անհրաժեշտ կապուղիները: 5. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը: 6. Բաժանորդը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն կառավարել ծառայությունից օգտվողների իրավունքները: 7. Օպերատորի կողմից տրամադրվող ներքին հեռախոսակայանը պետք է օժտված լինի VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկություններով (Call Transfer, Call Parking, Caller ID, Conference Call, Video call, etc.): 8. Օպերատորը պետք է տրամադրի 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում: 9. Օպերատորը պետք է ապահովի կապուղիների անցկացումը, բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը ոչ ուշ, քան Ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ: 10. Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա: 11.Հեռախոսահամարների մասին տեղեկությունների տրամադրման ապահովում Ծառայություններ մատուցողի կայքի միջոցով և ըստ պահանջի հաշվի մանրամասնումների՝ վերծանումների տրամադրում, կազմակերպության լիազորված անձին: 12. Ծառայությունների ամսավճարը որոշվում է ըստ բաժանորդի փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի: 13.Կից աղյուսակում տրամադրել ամսավճարը և քաղաքային հեռախոսահամարներին զանգեր	դրամ	240 000	1	ք.Երևան,փ.Կ. Ուլնեցի	01.01.2020թ.-31.12.2020թ.

		կատարելու րոպեների ներառումները: Կից աղյուսակը պետք է, պարտադիր կարգով, ներկայացվի գնային առաջարկին կից:					

N	Հեռախոսազանգերի ուղղությունները	Սակագին (ՀՀ դրա /րոպե)	Յուրաքանչյուր ամսվա բաժանորդային վարձ, ՀՀ դրամ, ներառյալ հարկերը
		Վճարովի րոպեներ	2500 դրամ
1	Դեպի 010,011, 012 և 060 կոդով և ՀՀ մարզեր ֆիքսված հեռախոսակապ (նվազագույնը՝ 360 րոպե անվճար)	4 դրամ	
2	Դեպի ՀՀ բջջային ցանցեր	24 դրամ	
3	Դեպի ԼՂՀ բջջային հեռախո ակապ	28 դրամ	
4	Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր	18 դրամ	

2	64211130	Բջջային հեռախոսակապի ծառայություններ Ձեռքբերվող Ծառայության նկարագիրը Պատվիրատուի կարիքների համար տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխարհագրորեն ամրակցված համարագրման պլանից հատկացված 1 բջջային հեռախոսահամար (հեռախոսահամարների քանակը ենթակա է փոփոխության, որը ամրագրվելու է լրացուցիչ համաձայնագրով)՝ որը հնարավորություն կտա Պատվիրատուին ամրակցված վայրում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակում կատարելու և ստանալու ներհանրապետական և/կամ միջազգային զանգեր, GSM 900/1800 ստանդարտի: Հնարավորության դեպքում նաև հեռախոսների տրամադրում: 1. Բաժանորդների փակ խմբում անսահմանափակ անվճար հեռախոսազանգերի տրամադրում: 2. Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը: 3. Ըստ պահանջի ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացումը ծառայություններ մատուցողի կայքի միջոցով և տրամադրել հաշվի մանրամասնումը՝ վերծանումը, կազմակերպության լիազորված անձին: 4. Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի: 5. Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման համաձայն: 6. Բաժանորդների շուրջօրյա սպասարկում շաբաթվա բոլոր օրերին: 7. Անհատական ենթահաշվով աշխատող կանխավճարային կորպորատիվ համարների տրամադրում համակարգի աշխատակիցների ընտանիքի անդամների համար: 8. Անհատական կորպորատիվ մասնագետի կողմից սպասարկում: 9. Ծախսերի վերահսկման ծառայություն համապատասխան սահմանչափերի վերաբաշխմամբ մեկ պայմանագրի ներքո: 10.Համարների սահմանաչափերի կարգավորում, համապատասխան սահմանաչափին հասնելու դեպքում հետվճարային ծառայությունների կասեցում, անհատական ենթահաշվով կանխավճարային սկզբունքով ծառայությունների օգտագործում:	դրամ	66000	1	ք.Երևան,փ. Կ.Ուլնեցի	01.01.2020թ.-31.12.2020թ.

		11. Միջազգային հեռախոսազանգերի տրամադրում բջջային հեռախոսակապի միջոցով: 12. Ռոումինգ ծառայության անվճար ակտիվացում: 13. Ռոումինգի հատուկ սակագներ Ռուսաստան, Միջին Արևելքի երկրների համար: 14. Գործող հեռախոսահամարների պահպանում: 15. Գնային առաջարկը ներկայացնել ընդհանուր արժեքով: Միջազգային զանգեր Ռուսաստան, Վրաստան, Եվրոպա, Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ: 16. Կից աղյուսակը ենթակա է լրացման և պետք է, պարտադիր կարգով, ներկայացվի գնային առաջարկին կից:					

Հիմնական ծառայություններ	Չափման միավոր մեկ րոպեի համար	Յուրաքանչյուր ամսվա բաժանորդային վարձ, ՀՀ դրամ, ներառյալ հարկերը
Ամսվա վճար մեկ հեռախոսահամարի համար		100 դրամ
Զանգեր խմբի ներսում		0
Զանգեր դեպի ՀՀ Սոցիալական ապահովության նախարարության կորպորատիվ բջջային փաթեթի բաժանորդներին		0
Զանգեր ցանցի ներսում		5 դրամ
Զանգեր դեպի այլ տեղական բջջային ցանցեր (ներառյալ ԼՂՀ)		15 դրամ
Զանգեր Հայաստանի ֆիքսված ցանցեր		15 դրամ
SMS ցանցի ներսում		15 դրամ
SMS դեպի այլ տեղական բջջային ցանցեր		15 դրամ
SMS խմբի ներսում		15 դրամ
Միջազգային SMS		20 դրամ
Ռոումինգ Ռուսաստան, Վրաստան, Եվրոպա, Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ		
Միջազգային զանգեր Ռուսաստան, Վրաստան, Եվրոպա, Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝

________________ Ա.Աբրահամյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

________________ Կ.Ամատունյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2

«20» « 01 » 2020թ. կնքված N «ՆՄԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիսի	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211100	Հանրային հեռախոսակապի ծառայություններ	20000	40000	60000	80000	100000	120000	140000	160000	180000	200000	220000	240000	240000
2	64211130	Բջջային հեռախոսակապի ծառայություններ	5500	11000	16500	22000	27500	33000	38500	44000	49500	55000	60500	66000	66000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

** Վճարումն իրականացվելու է ծառայությունների փաստացի մատուցումից հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության կամ հաշվի քաղվածքների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ռիկնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝

_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ,
ՀՀ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

_____ Կ.Ասատուրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն